ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (Ք. ՄՈՍԿՎԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Արամ Անդրեասյան:

2. Զբաղեցրած պաշտոնը.

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության շուկայի զարգացման վարչության առևտրի խթանման բաժնի ավագ մասնագետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2022թ. ապրիլի 11-ից 14-ը:

4. Հրավիրող կողմը.

Սեփական նախաձեռնությամբ:

5. Գործուղման նպատակը.

2022թ. ապրիլի 12-14-ը ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած 24-րդ միջազգային էլեկտրոնային բաղադրիչների, մոդուլների և բաղադրիչ մասերի ցուցահանդեսին մասնակցության նպատակով (Expo Electronica 2022):

6. Քննարկված թեմաները.

Հայաստանն իր առանձին թեմատիկ տաղավարով հանդես է եկել մի շարք երկրների կողքին: Հայաստանյան ոլորտը ներկայացնող լավագույն ընկերություններից 4-ը հնարավորություն են ստացել ներկայացնել իրենց ձեռքբերումներն ու տեսլականները միջազգային շուկայում արդեն իսկ մեծ ճանաչում ունեցող ընկերությունների հետ միասին: Այս հնարավորությունը օգնել է ոչ միայն տեղում ծանոթանալ աշխարհում ոլորտի առաջատարների փորձին ու նրանց հետ համագործակցության ուղիներ փնտրել, այլև բարձրաձայնել Հայաստանում տեխնոլոգիական աճի, իրականացման ենթակա գրավիչ ծրագրերի ու դրանցում ներդրումներ կատարելու տարբերակների, ինչպես նաև երիտասարդ տաղանդավոր մասնագետների մասին, ովքեր ջանք չենք խնայում՝ երկրի տնտեսական աճն ապահովելու գործում իրենց շոշափելի ներդրումն ունենալու համար:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

50-ից ավել ընկերությունների հետ, որոնք զբաղվում են լոգիստիկայով, դիզայնով, միջոցառումների կազմակերպմամբ, կապեր են հաստատվել, որոնց մի մասի ներկայացուցիչներն առաջարկել են դիտարկել ու ապահովել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության մասնակցությունը մի շարք միջազգային նմանօրինակ միջոցառումների (expo): Որոշ ոլորտային ընկերություններ ցանկություն են հայտնել համագործակցել ՀՀ հետ բարձր մակարդակով:

Ցուցահանդեսի շրջանակներում հայկական կազմակերպությունների կողմից կապ է հաստատվել մոտ 200 ոլորտային ընկերությունների, կորպորացիաների հետ՝ հրավիրելով հայկական տաղավար՝ ծանոթանալու արտադրանքին և ծառայություններին ու քննարկելու հնարավոր համագործակցությունը: Միջոցառման երեք օրերի ընթացքում հայկական տաղավար են այցելել բազմաթիվ պատվիրակներ, որտեղ նրանց ներկայացվել է Հայաստանի ոլորտային իրավիճակի նկարագիրը, ինչպես նաև ընկերությունների մասին տեղեկատվություն:

«Expo Electronica 2022»-ի ընթացքում տեղի է ունեցել ակտիվ ֆոտո և տեսանկարահանում՝ հայկական տաղավարի ակտիվությունն արձանագրելու, հայկական բարձր տեխնոլոգիաների ոլորտը, ինչպես նաև ներկայացված արտադրանքները, ծառայություններն ու լուծումները լուսաբանելու նպատակով:

Միջոցառմանը ՀՀ-ից մասնակցած ընկերությունները տրամադրելու են ամբողջական տեղեկատվություն իրենց հանդիպումների և պայմանավորվածությունների մասին, որը հավաքագրվելու և վերլուծվելու է՝ միջոցառմանը ՀՀ մասնակցության արդյունքների վերջնական արդյունքը գնահատելու նպատակով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակելու քննարկումները համագործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրեր իրականացնելու վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Արամ Անդրեասյան
18.04.2022թ.